

տարսալի մասնուած է: Մեծ—Եպարթոն ապահովուցուց Տեղապահը թէ այդ բոլոր լուրերը լոկ ժողովրդական տարածայնութիւններ են, թէ պէտք է ապահով ըլլայ ժողովուրդը:

—Տիարպէքիբի առաջնորդ Տ. Գէորգ Ծ. Վ. Իրրանոսեան Աներեկի հրկիզեալներուն համար անմիջական նպատակ մը խընդրած էր նպատակց յանձնաժողովէն, Պատրիարքարանէն գրուեցաւ թէ նպատակց Մատուկը կարող չէ, և դիմում ըրաւ ներքին գործոց նախարարութեան պետական օգնութիւն մը խընդրելով:

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Տեղապահ Սրբազանը, նախընթաց երեկոյ հեռաղիւրներու շրջեց Ս. Էջմիածին, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին և Երուսաղէմի Ս. Պատրիարքին, ինչպէս նաև գաւառական Առաջնորդներու, հաղորդելով Ամեն. Իզմիրլեան Սրբազանի միածայն ընտրութիւնն ի Պատրիարքութիւն Թուրքիոյ:

Երէկ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսէն, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքէն, բաւական թուով Առաջնորդներէ և մօտակայ տեղերու ազգայիններէ շնորհաւորական հեռագրեր հասան Ն. Ամենապատուութեան, որ մինչև երեկոյ Ակիւտար իր բնակարանին մէջ ընդունեց նաև շնորհաւորութեան եկող եկեղեցականներ և աշխարհականներ:

Ամեն. Իզմիրլեան Ս. Պատրիարք՝ առանձին տեսակցութեան մ' առթիւ, ուր Ն. Ամենապատուութեան ղիտել արուեր է թէ Հայրապետական թափուր Աթոռն ալ իրեն կ'սպասէ, հետեւեալ կերպով պատասխաներ է.

«—Տարուան մը ժամանակամիջոցը շատ քիչ կ'տեսնամ ես, Պոյոսյ Պատրիարքութեան շուրջ գիզուած կնճիւղները մտքելու համար: Ընդհանուր սկզբունքով համամիտ չեմ գործին զեկը տարին անգամ մը տարբեր ձեռքերու յանձնելուն, գործ մը, բարենորոգում մը հիմնական և մնայուն ըլլալու համար. անհրաժեշտ է որ անոր գործադիրը բաւական երկար ժամանակի համար փարի անոր ու բոլոր մտադրած ծրագիրը գլուխ հանէ: Հետևաբար, Ազգն երբ Պատրիարքութեան պաշտօնն ինձ յանձնեց, կրնայ Կաթողիկոսութիւնն ալ իմ արժանաւոր եղբայրներէս մէկուն, զոր օրինակ Գուրեան Սրբազանին յանձնել, որ կրնայ լիուրէ գոհացնել հայրապետական Աթոռին ամբողջ պահանջները:»